

ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ԱՌԱՋԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ՄԷ ԳԼՈՒԽԸ

Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունը, ինչպես հայտնի է, գրվել է 1651 թվականին, Կաթողիկոս Փիլիպոս Աղբակեցու (1633-1655) հանձնարարությամբ, սակայն վերջինիս մահից հետո Դավրիժեցին ընդհատում է գրությունը:

Նորընտիր Կաթողիկոս Հակոբ Զուղակեցու (1655-1680) հարկադրանքով 1658 թվականին Դավրիժեցին վերստին շարունակում է գրությունը և ավարտին է հասցնում 1662 թվականին:

Առաքել Դավրիժեցու պատմությունը թեև ընդգրկում է 1602-1662 թթ. ընթացքում տեղի ունեցած անցքերի Ակարագրությունը, այսուհանդեղձ հետագա միջամտողների կողմից գրքում տեղ են գտել նաև ավելի ուշ տեղի ունեցած այլևայլ դեպքերի ու անցքերի շարադրանքներ:

Մենք չենք անդրադառնա այդ աշխատության ձեռագրի մեջ հետագայում կատարված հավելումներին, ինչպես նաև հրատարակության ընթացքում Ուկան Երևանցու կողմից կատարված խմբագրական բնույթի միջամտություններին: Այդ մասին կան տպագրված մեկից ավելի հանգամանալից հետազոտություններ¹:



Ավարտելով Աստվածաշնչի տպագրության հոգնատանց աշխատանքները, Ուկան վարդապետ Երևանցին 1669 թվականի հունվարին շարվածքը իրականացնելու նպատակով Ամստերդամում տպարան է իշեցնում Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատության ձեռագրիը: Մինչ այդ, խմբագրման ընթացքում ծանոթանալով պատմության բովանդակությանը, Ուկան Երևանցու համար պարզ է դառնում, որ շարադրանքում զգալի տեղ է հատկացված նաև հետագա տարիներին վերաբերվող այլևայլ բնույթի, Դավրիժեցուն չպատկանող մեծ ու փոքր հավելում-

¹ Տե՛ս Հր. Միրզոյան, «Առաքել Դավրիժեցու պատմության առաջին հրատարակության մասին», Բամբեր Երևանի համալսարանի: Ե., 1971, լ. 2, էջ 190-197: Տե՛ս նաև Լ. Ա. Խամլարյանի «Առաջարանը», Առաքել Դավրիժեցի, «Գիրք պատմությանց»: Ե., 1990, էջ 5-52:

Աերի: Նրան հայտնի է դառնում, որ ձեռագրում տեղ է հատկացված Առյանսկ 1668թվականին Ատրպատականում տեղի ունեցած երկրաշարժի Ակարագրությանը: Նա աշխատության մեջ տեղեկության է հանդիպում նաև Խաչատոր Կոսպարցու կողմից Նոր Զուղայում հրատարակված ժամագրքի ու «Հարանց վարք» գրքերի վերաբերյալ:

Այս պարագայում թվարկված փաստերի հիման վրա, Ուկան Երևանցու համար կարող էր մտահոգության առարկա դառնալ, որ խնդրու առարկա ձեռագրում, կարևոր ու երկրորդական հավելումների կողքին ո՞չ մի խոսք չկա Մատթեոս Շարեցու և իր կողմից Ամստերդամում վերջին վեց-յոթ տարվա ընթացքում ծավալված և մեծ արդյունքի հասած հրատարակչական գործունեության, առավել ևս ամենքի կողմից սպասված Աստվածաշունչ մատյանի տպագրության վերաբերյալ: Պետք է ենթադրել, որ այդ ծանրակշիռ ու արծեքավոր փաստերի դուրս մնալը մտահոգելու ու նաև անհանգստություն է պատճառել Ուկան Երևանցուն և թերին լրացնելու մղումն է, որ հանգեցրել է նրան ձեռնարկելու իր կենսագրության հավելումը Դավիթեցու աշխատության վերջում: Բացթողով վերագրելով հեռավորության հետևանքով առաջացած անտեղյակությանը, Ուկան վարդապետ Երևանցին գրում է «Պատմութիւն կենաց Ուկանայ վարդապետի Երեւանցոյ՝ տպագրողի գրուս...» խորագրով ինքնակնասագրականը և իբրև Դավիթեցու հետինակության ԾԷ՝ զլու տեղադրում գործի մեջ, իբրև աշխատության օրգանական շարունակություն, որը և գործի հետ մեկտեղ լույս է տեսնում Ամստերդամում 1669 թվականի մայիսին:

Դավիթեցու պատմությունը հետագայում տպագրվում է ևս չորս անգամ՝ 1884, 1896, 1988, 1990 թվականներին: Ցավալի է սակայն, որ այդ տպագրություններից և ոչ մեկի մեջ տեղ չի հատկացվել այս կենսագրականին: Ինարկե, սխալ կլիմեր, որ հետագա հրատարակիչները, հետևելով Ուկանի օրինակին, այդ կենսագրությունը դարձնեին Դավիթեցու աշխատության օրգանական շարունակությունը:

Մեր խոսքը այդ մասին չէ, սակայն նոյնքան սխալ պետք է համարել, որ այդ արծեքավոր ու փաստառատ զլուխը, իբրև հավելված, դուրս է մնացել նրանց ուշադրության տեսահաշտից: Պետք է ըստ արժանվուն գնահատել այդ վավերագիրը, որտեղ կան մեր մշակութային կյանքի պատմությանը վերաբերող արծեքավոր և ճշտումներ, և՛ կարևոր լրացրումներ:

Այս կենսագրականի հրապարակումը կարևոր է ոչ միայն վերոբիշյալ Ակատառուումով, այլև վաստակաշատ մտավորական ու հրատարակիչ Ուկան Երևանցու մշակութային գործունեությունը արծեքավորելու, նրա կշիռը մեր հոգևոր կյանքի 1700-ամյա պատմության մեջ ճիշտ գնահատելու առումով, ինչը, ցավոք սրտի, մատնված է եղել անուշադրության:

Ուկան Երևանցին իր կենսագրության շարադրանքը սկսում է այդ ծանրի համար ավանդական դարձած սկզբունքով: Անդրադառնալով ծնողներին Սպահան տարպելու հանգամանքին, նա այնուին ընդգծված նշանակություն է տալիս ուսումնառության և հոգևոր կոչում ստանալու հանդեպ իր մեջ ի հայտ եկած մղումին,

մի մտասնեուում, որը գնալով հետզինուն անդիմադրելի զարգացում է ստանում և ավելի ուշ նրան մղում է հավատափոխության զայթակղության:

Չարունակության մեջ կենսագրության հետինակը անդրադառնում է Հիմ անապատի միաբան, բնական զիտության (արտաքին գրոց) հմուտ մասնագետ Մելքիսեդէք Վարդապետ Վժանեցու Էջմիածին գալու պատմությանը:

Լսեղով Մովսես Տաթևացի Կաթողիկոսի ծավալաձ լուսավորական գործունեության համբավը, նա լրում է անապատը և գալիս Մայր Աթոռ՝ տարիների ընթացքում «համար տքնությամբ» իր ամբարած զիտելիքները «մոռնելոց առաջ» իր հաշորմերին սովորեցնելու համար: Ըստ Առաքել Դավթիծեցու հավաստիացման, Մելքիսեդէք Վարդապետը Ս. Էջմիածնում հանդիպում է «Մովսես Կաթողիկոսին և սրա աշակերտներին, որի գալով ամենքը անսպասելիորեն ուրախացան»² (ընդգրություն իմն է - Խ. Ս.):

Իր «Կենսագրականում» Ուկան Երևանցին ևս անդրադառնում է Մելքիսեդէք Վժանեցու Էջմիածին գալուն և վերաբերմունքի արժանանալու փաստին, աակայն, ինչպես կարող է տեղեկանալ ընթերցողը, նա արձանագրում է տրամագծորեն հակառակ տեսակետ ու մոտեցում: Երիտասարդ Ուկանը Էջմիածնում հանդիպելով ու ծանոթանալով Հիմ անապատից եկած մտավորական վաճականի հետ, թեն կիսատ էր թողել իր կրթությունը, սակայն «ջանք չի անում աշակերտելու նրան» հետևելու նրա ուսմունքին, «որովհետև,- ասում է նա, - Էջմիածնում, երևելի այրերը... ամենքը պարապում էին այդ զիտությունը, նաև ատող էին զիտության, և ստորագնող, ցածրացնող այդ մեծարգո այրին, իրենք այդ զիտությանը խելահան չինելու պատճառով»: Ինչպես Ակտելի է, Ուկան Երևանցու գրածը բոլորովին նման չէ Դավթիծեցու պատմածին:

Էջմիածնում Մելքիսեդէք Վարդապետի հանդեան դրսւորված վերաբերմունքը թերևս պատճառ է դառնում, որ նա տեղափոխվում է Երևան, ուր և Ս. Անամիայի անվան մենաստանում բաց է անում իր դպրոցը:

Ուկան Երևանցու կողմից Առաքել Դավթիծեցու պատմության մեջ ավելացված ԾԷ գլուխ հրապարակումով մեր մշակութային կյանքի ապատմության մեջ ամրագլուխում է տեսակետ, ըստ որի՝ Երևան քաղաքում 1631 թվականի սկզբին երեքց-չորս ամիս Ս. Անամիա մենաստանում (այժմ՝ Զորավոր եկեղեցի) գործել է Մելքիսեդէք Վարդապետ Վժանեցու բացած դպրոցը, որտեղ իրականացվել է բացառապես բնական զիտությանը վերաբերվող առարկաների՝ քերականության, փիլիսոփայության, տոմարագիտության դասավանդումը:

Ուկան Երևանցու բերած այս հավաստիացումը, որքան մեզ հայտնի է, միակ աղբյուրն է, որի միջոցով Վավերացվում է Երևանում նման կարգի դպրոց լինելը, դպրոց, որի գորությունը պետք է արժեքավոր ու կարևոր ներդրում համարել Երևանի մշակութային կյանքի պատմության մեջ: Այդ դպրոցը, ըստ Ուկան Երևան-

² Տե՛ս Առաքել Դավթիծեցի, Պատմություն: Ե., 1988, էջ 312:

ցու, գործել է «Մի որոշ ժամանակ»: Այդ անորոշությունը ճշտելու միակ միջոցը թերևս կարող է համարվել ավանդվոր առարկաների վրա ծախսված ժամանակամիջոցով: ՄԵլքիսեդ Վժանեցին Երևանում հասցրել է իր աշակերտներին ուսուցածել քերականություն առարկան և մեկ էլ Դավիթ Ներգինացու (Անհաղթի) «Սահմանը իմաստափրության» գիրքը: Կա մի վկայություն ևս: ՄԵլքիսեդ վարդապետը իր «Կտակում» խոսելով տասնինների ընթացքում տքնանքով ձևոք բերած զիտելիքների մասին և ապա, խոսքն ուղղելով իր աշակերտներին, հպարտությամբ նշում է, որ ի հաջը «Ութ ամսվա ընթացքում է այդ ամենը» սովորեցրել նրանց, Երևանի ու Էջմիածնի դպրոցներում: Պետք է ենթադրել, որ այդ ութ ամսվա մոտ կեսը տեղի է ունեցել Երևանում, իսկ մյուս կեսը՝ Էջմիածնում³:

«Կենսագրականից» հայտնի է նաև, որ Երևանյան դպրոցի հաջողության համբավը հասնում է Էջմիածնի վանականներին, նրանց, ովքեր ծաղրանքով ու արհամարհանքով էին դիմավորել Լիմ անապատից եկած արտաքին գրոց հմուտ մասնագետ վարդապետին: Վանականները Երևանից ստացված լուրերից հետո դիմում են Մովսես Կաթողիկոսին և խնդրում, որ կա՞մ իրենց թույլ տրվի զնալու Երևան «ՄԵլքիսեդից դաս առնելու, կա՞մ նրան բերել այստեղ, որ Էջմիածնում դասավանդի»⁴: Կաթողիկոսը, ընդառաջելով դիմուններին, Վժանեցուն հանձնարարում է դպրոցը Երևանից տեղափոխել Էջմիածնին: Այս ամենը ժամանակագրական առումով թեև համբանում է Առաքել Դավիթնեցու պատմության ընդգրկման ժամանակահատվածին, այսուհանդերձ տեղ չի գտել նրա աշխատության մեջ, ուստի այս դրվագի միակ աղբյուրը և Ուկան Երևանցու կենսագրականն է:

Խնդրո առարկա կենսագրականից նաև հայտնի է, որ 1634 թվականին Փիլիպոս Կաթողիկոսի հանձնարարականով Խաչատուր Կեսարացին Սպահանից Էջմիածնին է ուղարկում երիտասարդ Ուկան Երևանցուն: Հայտնի է նաև, որ նույն թվականի կեսերին Էջմիածնին է գալիս Հոռմի հավատի տարածման ժողովի նվիրակ Պողոս Պիրոմալլին և արժանանում Փիլիպոս Կաթողիկոսի բարյացակամ վերաբերմունքին: Մայր Աթոռում Ուկան Երևանցին հանդիպելով վերջինի՞ շվիման մեջ է մտնում նրա հետ: Ուկանը սկսում է Պիրոմալլիից սովորել լատիներեն և նրան սովորեցնում հայերեն: Նրանք միասին զբաղվում են լատիներենի քերականությունը հայերեն թարգմանելու գործով: Պիրոմալլին իր բազմակողմանի զիտելիքների շնորհիվ արժանանում է Ուկանի ուշադրությանը, ուստի մտերմական է դառնում նրանց փոխհարաբերությունը: Այս մտերմությունը ունենում է իր թե՛ դրական, և թե՛ բացասական հետևանքները Ուկան Երևանցու կյանքում:

Այլևայլ աղբյուրներից հայտնի է դառնում, որ Պողոս Պիրոմալլին Հոռմի Հավատի տարածման ժողովի կողմից Հայաստան էր գործուղվել հատուկ առաքելությամբ: Նա հանձնարարությունը ուներ հայ երիտասարդության մեջ արմատավորել

³ Տե՛ս Առաքել Դավիթնեցի, Պատմություն: Ե., 1988, էջ 314:

⁴ Տե՛ս ամսագրի այս համարում, էջ 72:

կաթողիկե դավանանքի աստվածաբանությունը և ապա հուսալի երիտասարդներ կավագքեր, ուղարկեր Հռոմ Արանց կրթությունը այնտեղ իրականացնելու համար:

Պիրումալիի ու Ուկանի մտերմությունը ունենում է այն նշանակությունը, որ վերջինի համար ստեղծվում են Հռոմում կրթություն ստանալու հուսալի նախադրյալներ: Պիրումալիի խոստումների շնորհիվ Ուկանի մեջ արթնանում է վաղ մանկությունից ուսման հանդեպ նրա հոգում անթեղված մարմաքը: Գյուղաքաղաք Էջմիածինից միջավայրից դուրս գալու և Հռոմում կրթություն ստանալու մղումը նրան դնում է դավանափոխություն ընդունելու գայթակղության առաջ: Այս մտասնեումն պատճառով Ուկան Երևանցին շուրջ երկու տասնամյակ օտարվում է հայուններից, որի ընթացքում սովորում է Լեռողյակ կաթողիկե դպրոցում և մեկից ավելի անգամ հարկադրաբար ու կամավոր, ստորագրում հավաստ հանգանակի թուղթը և մատուցում այլևայլ բնույթի ծառայություններ կաթողիկե Եկեղեցուն:

1655 թվականի Կեսերին Ուկան Երևանցին Վերադառնում է Էջմիածին՝ հայրենի Եկեղեցու գիրքը: Զջշման թղթով դիմում է Հակոբ Զուղայեցի կաթողիկոսին և իրականացնում Հայաստան Վերադառնալու իր երազամքը:

Նորընտիր կաթողիկոսը ներում է շնորհում Ուկան Երևանցուն և նշանակում նրան Ուշի գյուղի Ս. Սարգսի Եկեղեցու վաճարայր:

Հատկանշական է, որ «Ինքնակենսագրականում» ոչ մի խոսք չկա Ուկան Երևանցու գործումնեությամբ երկու տասնամյակի ընթացքում վարած դավանափոխության, ստացած կրթության և կաթողիկե հաստատությունների հետ ունեցած փոխհարաբերությունների մասին: Այդ ամենի բացակայությունը կենսագրականում պետք է վերագրել նրա զղշմանն ու շրջադարձին:

*
* *

Ստորև ներկայացնում ենք խմերո առարկա ԾԷ գլխի նոր թարգմանությունը:

ԳԻՐՔՍ ՏՊԱԳՐՈՂ՝ ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՎԱՆՑՈՒԻ

ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ ԾԷ

Նա ազգությամբ հայ բարեպաշտ Թորոս և Գոհարազիզ անունով ծնողների զավակն էր, որոնք Ծամ Արասի առաջին բռնազարյի ժամանակներում Երևանցիների հետ տարվեցին Սպահան քաղաք, և այնտեղ հաստումանալով՝ ամուսնացան, որոնցից ծնվեց այս Ուկանը հայոց ՌԿԳ (1063 թ.=1614 թ.)-ին, հունվար ամսին: Երբ մեծացավ, նրան տվեցին կրթության, որը և ստացավ հնարավորության չափով

աշխարհական քահանաներից, մինչև Մովսես Կաթողիկոսի վարդապետելու ժամանակ Սպահան գալը: Նրան մեծ սիրով ընդունեցին Սպահանի հայազգի քրիստոնյաները, այնպես որ նրա սրբակենցաղ և հեղաքարտ աշակերտներից ոմն Խաչատոր վարդապետի ընտրեցին իրենց առաջնորդ: Սա, մնալով Սպահանում, բոլոր կրթության ոլորտները բարեկարգեց՝ եկեղեցական կարգավորությունը, բարեպաշտության կարգուկանոնը, դպրոցները և բազում որիշ բաներ, որով և շատերը կրթվեցին Աստվածաշունչ գրքով: Այդ ժամանակ մանուկ Ռականը իր պատաճեկության հասակում սաստիկ ցամկություն դրսերեց դեպի այդ մենաստանն ու վարժարանը: Մնողները, սակայն, չէին կամենում նրա այդ վարժարան գնալը. ինքը սրտի տևական տոշորումով ձգուում էր ուսման և կրոնավորական կարգի, ուստի և ծնողներից ծածուկ գնաց Խաչատոր վարդապետի մոտ ուսանելու և կրոնավորության: Մնողներն իմանալով՝ գնացին, որ նրան ետ բերեն այնտեղից, բայց ապարդյուն: Երկու և երեք անգամ տարբեր առիթներով գնացին-քերեցին իրենց մոտ և չէին թողնում վերադառնալ: Ինքն այնպես էր փախչում, որ ծնողները ձանձրանալով՝ նրան թույլ տվեցին մենալ այնտեղ: Նա, մնալով այնտեղ, կարծ ժամանակում սովորեց սաղմոսները ըստ Հայ Եկեղեցու կանոնի, յուրացրեց շարականները և մյուս աստվածաշունչ գրքերը՝ ընդհանրական թղթերը, Պողոսի թղթերը, Եսայու մարգարեությունը:

Այդ ժամանակ շաբը, Մովսես վարդապետին գտնելով, տարավ իր մոտ՝ Բարելոն, որպեսզի աս մոմ սպիտակեցմի: Դրա համար նրան տվեց իր կրտսեր ծառաներից չորսին, որոնց սովորեցնելով՝ վարդապետը համանեց պատամիներին, իսկ սպիտակեցրած մոմերը՝ շաբին: Մովսեսը հրաման ստացավ Սուրբ Էջմիածնի վերակացու՝ լուսարարապետ լինել, ուստի և գրով Խաչատոր վարդապետին կանչեց իր մոտ՝ Էջմիածին, որը և անհապաղ ելնելով՝ գնաց: Էջմիածին ժամանելուն պես Մովսես վարդապետին կաթողիկոս ձեռնադրեցին, և առ իր ձեռնադրությունից մետու Խաչատոր վարդապետին պաշտոնակատար կարգեց արևմտյան տաճ վրա, իսկ ինքը՝ Կաթողիկոսը, Վերադառնալով եկավ Սպահան՝ տեսակցելու և շնորհավորելու նորման թագավոր Ծահ Սեֆիին: Այդ ժամանակ մեռել էր Ծահ Արասը, ուստի գահ բարձրացավ Ծահ Սեֆին: Կաթողիկոսը գնալով Սպահան՝ հասավ թագավորից իր խնդրածին, այսինքն հարյուր թուման տուրքի վերացմանը, որը հաստատել էր Ծահ Արասը Մելքիսեդ Կաթողիկոսի համանառությամբ: Երբ Կաթողիկոսը աշնանը վերադարձավ Էջմիածին, մանկահասակ Ռոկանին իր հետ բերեց: Սա եկավ Կաթողիկոսի հետ Սուրբ Աթոռ՝ Էջմիածին, այստեղ տեսավ Մելքիսեդ Վժանցի վարդապետին՝ մի կորովի և խոսքով գորավոր մարդու, որը բնական գիտություն էր ուսուցանում: Ռոկանը, մանկահասակ լինելով, ոչ մի շանք չարեց աշակերտելու նրան, մանավանդ որ հայերի մեջ ոչ մեկն այդ գիտությունը չուներ: Երևանի այրերը, որոնք կարծում էին, թե գիտություն ունեն, ամենքը պարապում էին այդ գիտությունը, հաև ատող էին գիտության և ստորացնող, ծանրացնող այդ մեծարգությունը, իրենք այդ գիտությանը խելահաս չլինելու պատճառով: Առավել ևս, որ

ըովանիսկ չէին էլ կարող հասկանալ: Այս պատճառով Ուկանն էլ, տեսմերով աստվածապարզ և լուսավոր, պայծառ այս գիտության ավագների պարտավելը, առանց որի ամենար է մարդկանց համար որևէ իր ճշմարտապես իմանալ և Աստվածաշունչ գրքերի բառերը պարզորեն բացատրել, ինքը ևս չհետևեց նրան: Երբ զարդուն եկավ, Մելքիսեդ վարդապետը ճանապարհ եղավ, գնաց Աւորապատականի կողմերը, որովհետև Ղազափին երկրում եղբրորդին գերի էր: Գնաց նրա հետուից՝ հուսալով ազատել նրան, և այդ կողմերում պատահած արհավիրքի պատճառով չկարողացավ գտնել, քանզի օսմանցիների զորապես խոսրով փաշան, գալով այդ կողմերը, խոռվել էր բոլորին: Դրա համար էլ վերադարձավ Երևան:

Այս ժամանակներում Ուկանի ուսուցիչ Խաչատոր Կերարացին վերադարձավ Սարմատացիների (Լեհաստան) երկրից Սիմոն Զուոյանցու հետ, որը նրա մոտ աշակերտ էր և արելա: Միանք առավելապես ամոթաբար էին եղել բազմից որպես քրիստոնյաներ՝ քերականության և իմաստափառական գիտություններին անվարժ լինելու պատճառով: Դրա համար էլ երբ հասան Էջմիածին, պատահելով Տեր Մելքիսեդին՝ մեծ սիրով ձեռնարկեցին բնական գիտության օրենքները ուսանելուն, ալճքան, որքան որ վերջինն բազում շանքերով հասու էր դարձել: Նաև Դավիթ Ներքինացու՝ Անհաղթի «Սահմանը իմաստափրութեան»-ը՝ Երևանի վաճքում, որոնց հետ և սա սկսեց սովորել որոշ ժամանակ: Երբ այս եղավ, վերջինիս ընկերակիցներն ու արելաները, որ Էջմիածնում էին, եկան և Մովսես Կաթողիկոսին ասացին: «Կա՞մ մեզ ևս հրաման տուր գնալ Երևան՝ Մելքիսեդից դասեր առնելու, կա՞մ հրան թեր այստեղ, որ Էջմիածնում դասավանի»: Կաթողիկոսը ատիպած հրամայեց Մելքիսեդին գնալ Էջմիածին՝ դասավանդելու այն բոլոր արելաներին, որոնք կկամենային: Երբ Մելքիսեդը գնաց, Խաչատոր Վարդապետը չկամեցավ գնալ Էջմիածին, այլ մնաց Երևանի վաճքում: Երկուսից մեկնումեկին՝ Սիմոնին կամ Ուկանին, հարկ եղավ մնալ Խաչատոր Վարդապետի հետ, որովհետև երկուսն էլ նրա աշակերտներն էին մանկությունից: Այստեղ Սիմոնը, որպես ավագ, Ուկանին ասաց: «Տե՛ս, Տե՛ր Ուկան, մեզանից մեկը պիտի մնա այստեղ, Վարդապետի հետ: Այս գիտությունները նույժ պետքական են մեզ, որ գնալով Սպահան՝ ուսուցանենք: Եթեն դու ցանկություն ունես սովորելու, որո՞ւ գնա, ես կմնամ սպասավորելու սրան: Իսկ եթեն չես ուզում, ես կգնամ, և դու այստեղ կապասավորես Վարդապետին»: Սա էլ, անտեղյակ լինելով գիտելիքներին և տարիքով պատանի լինելով, մանավանդ ավագության առաջնությունը տալով Սիմոնին, ինքը մնաց Վարդապետի մոտ՝ Երևանում, իսկ Սիմոնը Մելքիսեդի հետ գնաց Էջմիածին, այստեղ կարդաց Պորփիրը և Ստորոգությունները, իսկ Մեկնության (Պերիարմեանիա) մինչև տասն և չորս գլուխը: Այդ ժամանակ պատվիրակներ եկան Սպահանից Խաչատոր Վարդապետին տանելու, որի հետ և այս երկուսը (Սիմոնը և Ուկանը) գնացին: Երբ գնացին Սպահան, Ուկանը մասամբ Սիմոնից դասեր առավ, մասամբ Մեկնությունից, իսկ քերականությունը, որ նախնիներինն է՝ միասին սովորեցին, քանզի Ուկանն էլ հույժ դյուրմբռնող էր:

Այդ օրերին մեռավ Մովսեսը, և Փիլիպոսին ձեռնադրեցին կաթողիկոս: Երբ Փիլիպպոս կաթողիկոս եղավ, Խաչատորից ճամակով խնդրեց Տեր Ուկանին առաքել իր մոտ: Իսկ աս, գալով Սուրբ Էջմիածին, Բանդիակեց մի լատին վարդապետի՝ Պողոս անունով, ազգությամբ հիւլացի, որն իմաստափական ամեն տեսակի ուսմունքներին քաջատեղակ էր: Նրա հետ բազմիցս գրուցմերից ճանաչեց Օրան որպես բանիմաց և հովտ հնուտ, թեպետև մեր լեզվի իմացությամբ փոքր-ինչ տկար: Ուստի և թողեց ամեն ինչ, ողջ խելամտությամբ հետևորդ եղավ Օրան, սովորեց որոշ չափով լատին լեզուն և գիրը, սովորեց նաև քերականությունը կատարելապես, որը և թարգմանեց մեր լեզվով: Որից էլ կազմեց մի կարճառոտ քերականություն: Նաև սովորեց բոլոր գիտությունները համառոտակի, այսինքն բնական գիտություն, իմաստափակություն, մետաֆիզիկական փիլիսոփայություն և աստվածաբանություն, նաև երկրաշափություն և աստղաբաշխություն: Բայց այս ամենը ոչ կատարելապես և իր կամեցածի չափով, այլ մասամբ՝ մարդմանկան հոգսերի շատության պատճառով: Բայց բազում հոգնություններ, հալածանքներ, սուրացումներ կրեց թե՛ կաթողիկոսից, թե՛ ընկերներից, և թե՛ մեր ազգից, նաև իրենից ավելի սուրադաս այլերից, որովհետև բոլորը նրա դեմ եղան իբրև օտարի, ունակոյն էին անում մեծաբանելով և՛ վերամբարձությամբ, և՛ բանակոյի ձեռնարկելով ու հականառելով այն բաների դեմ, որը ո՞չ սովորել էին, և ո՞չ էլ լսել, էլ չասած կրթության կամ հմտության մասին: Իսկ նա, սրանք տեսնելով, թեև բավականին լավ գիտեր հայերի ըմբռությունն ու բիրս վարը, սակայն անձնական փորձառությամբ էր ճանաչում նախնիներից միշտ բողոքանքների մասին, որոնք բազմազան եղանակներով բողոքում էին իրենց գրերում, ինչպես վաղուց ի վեր մեր վեր թարգմանչները, ինչպես Մովսեսը «Ողբում»: Իսկ նա այս բոլոր հալածանքների և փորձանքների հորդառատ հեղեղների մեջ, ոչ մեկից, ոչ մի տեղից միսիթարություն չտանալով, այլ միշտ վշտերի և տեսակ-տեսակ քամահրանքի և արհամարհանքի արժանանալով, սկսեց լատիներենից հայերենի թարգմանել իր սովորած քերականությունը, դրանից հետո աղոթքները, օրիներգությունները, նաև «Տրամաբանության տարրերը»: Երկար ժամանակ անցնելուց հետո վախճանվեց Փիլիպպոս Կաթողիկոսը, և նրան հաջորդ նատեց Տեր Հակոբ Զուհայեցին: Սա ևս սկսեց որոշ ժամանակ անտեսել Ուկանին, իսկ նա ամեն ինչի համբերում էր Քրիստոսի համար, ասելով Երեմիայի խոսքերը. «Նրան եմ սպասում և կիսամբերեմ»:

Որոշ ժամանակ անց Ուկան վարդապետի եղբայր Ավետիս ամունով բարեպաշտ և երկյուղած այրը Հոլանդիայում հանդիպեց Մատթեոս գրագրին, որը ձեռնարկել էր տպագրության գործը, ստեղծելով մի ձեռք տպատա, որ երեք տեսակի է լինում միջադիր, գլխազիր և ծաղկազիր: Սկսել էր մի «Հիսուս Որդի» տպել, բայց չէր վերջացրել, այլ հասնելով մինչև «Խոստովանմին» նույն տեղում վախճանվել էր բազում պարտքերի մեջ, քանզի ինչ որ ձեռնարկել էր, բոլորը պարտքերով էր արել: Պարտատերերն էլ ամենքը, նրա մահվան ժամին անգամ, նրան շրջապատած իրենց պարտքերն են պահանջել: Իսկ նա, ոչինչ չունենալով վճարելու, դիմել էր

Ուկան վարդապետի Ավետիս անունով եղբորը: Նա էլ իր ամրող ստացվածքը տվել էր պարտատերերին և գրոճարանը վերցրել, մինչև որ տոկոսներն էլ պարտքերի հետ հատուցեր: Եվ այս բոլոր պատահարներից հետո գրել էր իր եղբայր Ուկան վարդապետին՝ զայ և տպագրության գործն առաջ տանել, իսկ ինքը ձեռնարկել էր միջակ գիրը խորհնելուն, որով տպվեցին Ժամագիրը, Շարակնոց, Աստվածաշունչ և այլ գրքեր:

Ուկանը էլ Տեր Հակոբի հրամանով և Արա նամակով Սուրբ Էջմիածնից եղանով բազում հոգածովյուններով եկավ-հասավ տպարան, որը կաթողիկոսի հրամանով տպվում էր Շարակնոց, և հասել էին մինչև «Համբարձաւ»-ը Ուկանի աշակերտ Կարապետ Վարդապետի ձեռքով:

Երբ ինքը հասավ տպարան, ձեռնարկեց Աստվածաշնչի խորագրերի համար առտրզիր ստեղծելու աշխատանքին: Երբ վերջացրեց Շարակնոցը, ձեռնարկեց Աստվածաշնչի տպագրությանը, Աստվածաշնչից պակասող շատ բաներ շարադրեց և կարգավորեց ըստ լատինականի, գլուխների և տմերի բաժանեց, ինչպես երևում է տպված Աստվածաշնչից: Նաև Աստվածաշունչ գրքերի լրիվ համարաբառը ավելացրեց՝ լատիններից բացատրությունները մերին փոխադրելով, որպիսին մենք արել էինք միայն Ավետարանների համար: Նաև վերստին թարգմանեց Սիրաքի որդի Հետուի լիակատար գիրքը, քանզի թեև մենք ունենք, բայց ոչ լրիվ, այլ պակասավոր և համառոտ: Մեր որոշ Աստվածաշնչերում այս գիրքը պակասում էր ամբողջությամբ: Թարգմանեց նաև Եզրասի չորրորդ գիրքը, որը ևս մեզանում միշտ պակասում էր, իսկ Աստվածաշնչերում ամենմին չկար: Թարգմանեց նաև լատինների Աստվածաշնչի ցանկերը, որով ընթերցողը դպրությամբ կզտմի գրքերի մեջ իր որոնմածը, որի կարիքը որ ունենա: Բոլորը երկուական համարներով են շարակարգված այսինքն զյուի համարով և տողի համարով, որպեսզի թեև մենք գրքերում ինչ-որ բառ փնտրելու լինի, այդ բառի առաջին տառով ցանկը նայի, որովհետև ըստ այբուբենի էր շարակարգված այդ ցանկը՝ բառով կզտմի, թե՞նոր գրքում է այդ խորը կամ այդ տառով սկսվող բառը: Եվ սրանցով անսխալ կզտմի իր փնտրածը: Իսկ եթե նոյն մատյանում նոյն խոսքը մի համար միայն ունի՝ մի անգամ է դրված, եթե երկու՝ երկու անգամ, նոյնպես՝ մնացած թվերը՝ համարներն է պետք հասկանալ: Այսպես են նաև ուրիշ Աստվածաշունչ մատյանները, որ շարադրված են նոյն կանոնով:

Ձեռնարկեց նաև գրքի բառերի թարգմանությունը, որը լատինները կալեպիսում են անվանում: Մինչև դէ տառը թարգմանեց: Եթե Տերը հաջողեր ավարտին հասցնելու, սա կլիներ զանձարան, շտեմարան իմաստության ըստ ամենալի, և հանճարի և գիտության հասցնող ճշմարիտ ուղի: Սա դուռ է և բանալի բոլոր գրքերի, թէ՝ հոգևոր, և թէ՝ արտաքին գիտությունների համար, որովհետև բառերը սահմանում ենքուն է բացահայտում:

Նրա տպած Աստվածաշնչի մեջ կարգած է նաև Գրքերի ընթերցվածքների տոնացոյցը՝ որ ճաշու ժամին են կարդում: Մեր նախորդների համարով և զյուի հա-

մարով կարգվածները դժվար էին գտնվում, քանզի որոշ տեղերում Գրքերի համար-ներն էին սխալ դրված, տեղ-տեղ էլ Տոնացույցի մեջ գոռողներն էին սխալ գրել, կամ մի համարի տակ էին գրել, որով կա'մ դժվար էր լինում գտնելը, կա'մ ամենափափառ չէր լինում: Ուկանի արածը երկուական թվերով էր շարադասպած, այնպես որ որոնողը տեղնուտեղը կգտներ փնտրածը: Եվ մանավանդ նախկին օրինակներում գրքերի վերնագրերն էլ էին շփոթած, իսկ համարները, որոնք մեծ ջանքերով էին գտնվում իրենց տեղերում, համարների տակ կարգեց՝ հետևողներին և քննողներին դուրսկայամբ հասկանալի և մատչելի դարձնելու համար:

Տպագրեց նաև լրիվ այբբենական ցամկը Ասվածաշումչ գրքի, որը որ ինքն էր թարգմանել լատիններից: Հետո անդրադարձավ Աղոթագրքերին, Պարզատումարին՝ Տոմարով, Մեծն Մովսես Խորենացու գրած Աշխարհացուցին, դրա հետ նաև՝ շատ օգտակար Աղվեսագրքին: Նաև, ի փառ Սուրբ Երրորդության, տպագրեց Առաքել Վարդապետի գրած նոր Պատմագիրը, որն ըստ քերականության սրբագրելով՝ ուղղել էր՝ անհմուտ և անշնորհք այլերի աղավաղումները շտկելով:

Թեև տակավին Աեղություններ էր կրում մեծամիտ իմաստակներից և կեղծավոր-ներից, եկեղեցականներից և աշխարհիկներից, մերձավորներից և հեռավորներից, բայց ինքը, չարչարանքներ կրելով, ասում էր. «Եթե մարդկանց պիտի հաճոյանամ, ապա Քրիստոսի ծառա չեմ»:

Թարգ. Ա. ԶՈՀՐԱԲՅԱՆ

